ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

04.09.2014թ.
223-ի 5

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2013թ.-ի ընթացքում Երեւան քաղաքում քանի՞ թեքահարթակ է կառուցվել,
2. Խնդրում ենք հայտնել 2013թ.-ին Երեւանում կառուցված թեքահարթակների հասցեները,
3. 2013թ.-ին Երեւանում կառուցված թեքահարթակներից քանի՞սն է կառուցվել բացառապես Երեւան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին եւ որքա՞ն գումար է ծախսվել,
4. 2013թ.-ին Երեւանում կառուցված թեքահարթակներից քանի՞սն է կառուցվել Երեւանի քաղաքապետարանի եւ մասնավոր անձանց (տնտեսվարողների) համաֆինանսավորմամբ եւ որքա՞ն գումար է ծախսվել Երեւանի քաղաքապետարանի եւ մասնավորի կողմից առանձին-առանձին,
5. 2013թ.-ին Երեւանում կառուցված թեքահարթակներից քանի՞սն է կառուցվել բացառապես մասնավոր անձանց (տնտեսվարողների) միջոցների հաշվին եւ որքա՞ն գումար է ծախսվել:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան